ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2011 թվականի N 137-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի<ԱՇԽԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ> ԹԻՎ 142-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 18-ի թիվ 251-Ա որոշմամբ լուծարվել է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի <Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա> փակ բաժնետիրական ընկերությունը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.ՀՀ Տավուշի մարզպետի 2008 թվականի նոյեմբերի 20-ին թիվ 142-Ա որոշման 1. և 2. կետերից հանել ,<<Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> ՓԲԸ>> բառերը:

2.Դադարեցնել <<Աչաջրի առողջության կենտրոն>>,<<Սևքարի գյուղական բժշկական ամբուլատորիա>>,<<Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգող Աշխեն Ավետիսյանի հետ կնքած 20.11.2008թ. աշխատանքային պայմանագիրը <<Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության մասով:

3.Աշխատանքային պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) պայմանագրից հանել.առաջին պարբերության<<Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>>,<< և Խաչատուր Ցուցույանի >> բառերը.

2)1.1 կետից հանել <<Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> բառերը.

3)1.3 կետը կարդալ նոր խմբագրությամբ.

<<1.3 Վերստուգողի համար սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է <<Աչաջրի առողջության կենտրոն>> ՓԲԸ՝ հիմնական,իսկ <Սևքարի գյուղական բժշկական ամբուլատորիա>> ՓԲԸ՝ համատեղությամբ.

4)4.2 կետը կարդալ նոր խմբագրությամբ.

<< 4.2 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի վարձատրության չափը սահմանում է գործատուն, <<Աչաջրի առողջության կենտրոն>> ՓԲԸ գործադիր մարմնի ղեկավարի աշխատավարձի 90 տոկոսի չափով,<Սևքարի գյուղական բժշկական ամբուլատորիա>> ՓԲԸ՝ նվազագույն աշխատավարձի չափով >>:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ.հոկտեմբերի 13
ք. Իջևան